«ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կոմիտասի պողոտա 49/2 Նստավայր՝ Երևան 0082, Ծովակալ Իսակովի պող. 2

Երևան, « 29 » ապրիլի 2016թ.

Թիվ ՀԿՄԵ-16/002

ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Արա Գրիգորյանից
(դիմողի անուն, ազգանուն)

ՀՀ, Երևան, Իսակովի պող. 2, հեռ. 010-510-100, ara.grigoryan@pernod-ricard.com
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ «Հայկական կոնյակագործների միություն» իրավաբանական անձանց միությունն ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարը,
2. Անձնագրի պատճենը,
3. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ,
4. Հետաքրքվածության նամակ,
5. ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ վերլուծություն:

Դիմող՝

Արա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Նախագահ

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչատնտեսական վարչություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
«02» 05 2016 թ.
Մուտք N Ստ/5037-16

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կոմիտասի պողոտա 49/2 Նստավայր՝ Երևան 0082, Ծովակալ Իսակովի պող. 2

Երևան, 29 ապրիլի 2016թ.

Թիվ ՀԿՄ-16/003

ՏԵՂԵԿԱՆՔ

Միության գործունեության վերաբերյալ

«Հայկական Կոնյակագործների Միություն» իրավաբանական անձանց միությունն իր գործունեության վերջին երկու տարիների ընթացքում ակտիվորեն զբաղվում է հայկական կոնյակագործության ոլորտի արդի խնդիրների ուսումնասիրությամբ, վերլուծությամբ և դրանց որոշակի հնարավոր լուծումների մշակմամբ:

Մասնավորապես, Միությունն իրականացնում է,

- հայկական կոնյակի սպիրտների արտադրության համար օգտագործվող խաղողի, հայկական կոնյակի սպիրտների, հայկական կոնյակների որակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ,
- խաղողագործների, հայկական կոնյակի սպիրտների և հայկական կոնյակներ արտադրողների գործունեության կարգավորում, արտադրողներին խորհրդակցության տրամադրում, կոնյակագործության ոլորտում տեղեկատվության փոխանակում, ծանոթացում նոր տեխնոլոգիաների և սարքավորումների հետ,
- արտահանման նոր շուկաների բացահայտում, այդ շուկաներ մուտք գործելու հետ կապված խոչընդոտների բացահայտում, անհրաժեշտության դեպքում, դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Միությունը մշտապես ուսումնասիրում և վերլուծում է Հայկական կոնյակի արտադրությանն առնչվող օրենսդրությունը: Որևէ նոր օրենսդրական նախագիծ, որն առնչվում է հայկական կոնյակի արտադրությանը (ներառյալ՝ խաղողի աճեցմանը, հարկերին, արտադրական պրոցեսներին առնչվող և այլն), Միությունը ներկայացնում է իր անդամների քննարկմանը, որի արդյունքում մշակվում և ներկայացվում են առաջարկություններ կամ հավանություն է տրվում նախագծին:

Արա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Նախագահ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան, Կոմիտասի պողոտա 49/2 Նստավայր՝ Երևան 0082, Ծովակալ Իսակովի պող. 2

Երևան, « 29 » ապրիլի 2016թ.

Թիվ ՀԿՄԵ-16/004

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի առջև դրված խնդիրների և նպատակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հավակնում է դառնալ գյուղատնտեսության ոլորտում զարգացումների ապահովման կարևորագույն գործոններից մեկը՝ դառնալով լակմուսային թուղթ՝ հասարակության պահանջները և կարծիքը բացահայտելու և լսելի դարձնելու համար: Հաշվի առնելով, որ գյուղատնտեսության նախարարության առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման և ոլորտի զարգացման կարևոր նախապայմաններից է հանրության հետ սերտ համագործակցությունը և վերջինիս խնդիրների իրական պատկերի տիրապետումը, միանգամայն ակնհայտ է դառնում նման ինստիտուտի ստեղծման անհրաժեշտությունը, կարևորությունը և այն ճիշտ գործադրելու պարագայում ակնկալվող բարձր արդյունավետությունը:

Հարկ է նշել, որ կոնյակի արտադրությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության պատմականորեն կարևորագույն ոլորտներից է, որը սերտորեն կապված է գյուղատնտեսության ոլորտի թիրախային ճյուղ հանդիսացող խաղողի արտադրության հետ: Ուստի, կարևորում ենք կոնյակի արտադրության ոլորտի ներկայացուցիչների ներգրավումը այս Հասարակական խորհրդում :

«Հայկական Կոնյակագործների Միություն» իրավաբանական անձանց միությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կոնյակի արտադրությամբ զբաղվող ընկերություններին միավորող միակ պաշտոնական հարթակը, ուստի Միության անդամակցությունն Հասարակական խորհրդին կապահովի նախարարության և Հայաստանի Հանրապետության կոնյակագործների առավել սերտ կապը: Հասարակական այս խորհրդի շրջանակներում միության և նախարարության համատեղ աշխատանքը լայն հնարավորություններ կստեղծի խաղողի մշակման և կոնյակի արտադրության ոլորտներում առկա խնդիրների լուծման և ապագա զարգացումների ապահովման համար:

Այսպիսով, հայտնում ենք, որ խորապես հետաքրքրված ենք գյուղատնտեսության նախարարության այս յուրատեսակ նախաձեռնությամբ, և պատրաստակամ ենք հնարավոր բոլոր միջոցներով աջակցելու վերջինիս գործունեությանը:

Արա ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կոմիտասի պողոտա 49/2 Նստավայր՝ Երևան 0082, Ծովակալ Իսակովի պող. 2

Երևան, 29 ապրիլի 2016թ.

Թիվ ՀԿՄԵ-16/005

ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ վերլուծություն

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ակտիվ գործունեություն է ծավալում Հայկական կոնյակի արտադրության ոլորտում: Նախարարության գործունեությունը Հայկական կոնյակի արտադրության բնագավառում կարելի է բաժանել մի քանի ենթաոլորտների, որոնցում նախարարության գործունեությունն առավել ակտիվ և զգալի է:

Այդ ոլորտներից առաջինը Հայկական կոնյակի արտադրության բացառիկ հումքի՝ խաղողի մշակման ծավալներին և որակին մշտապես հետևելն է: Յուրաքանչյուր տարի նախարարությունը մինչև մթերման գործընթացն սկսելը կատարում է մթերվող խաղողի կանխատեսվող ծավալների մոնիթորինգ: Նախարարությունը հանդես է գալիս, որպես առանձնահատուկ կապող օղակ խաղողագործի և կոնյակ արտադրող ընկերությունների միջև՝ ներկայացնելով նրանցից յուրաքանչյուրի և բոլորի շահերը:

Նախարարությունը զբաղվում է նաև Հայկական կոնյակի արտահանման նոր շուկաների բացահայտման գործով: Մասնավորապես, նախարարության կողմից օգտագործվում են բոլոր հնարավոր հարթակները Հայկական կոնյակի արտահանման նոր շուկաներ բացահայտելու և, ի վերջո, արտահանման ծավալները մեծացնելու նպատակով:

Նախարարությունը մշտապես աջակցում է Հայկական կոնյակագործների միության գործունեությանը, որը հանդիսանում է Հայկական կոնյակի արտադրությամբ զբաղվող ամենախոշոր ընկերությունների միակ միավորումը Հայաստանում: 2015թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը Երևանի կոնյակի գործարանում մասնակցել է Հայաստանի կոնյակագործների միության ընդլայնված նիստին, որին ներկա էին նաև գինեգործների միության անդամներ և վերջիններիս հետ քննարկել առկա խնդիրները:

կազմված է 23.02.2011 թ. և բաղկացած է 12 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայկական Կոնյակագործների Միություն
իրավաբանական անձանց միության
հիմնադիրների ժողովի
2011 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ
(արձանագրություն հ. 1)

գործադիր տնօրեն

Սամվել Գրիգորի Չաիլյան

Կ.Տ.

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԱՐԱԲԿԻՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 05.05.2011 թ.

Գրանցման թիվ 264.150.21755

Վկայական թիվ 0314 171755

հարկ վճարողի հաշվառման համար

00106731

Արաբկիրի Տ/Բ պետ՝

Հ. Խուդգարյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ք. ԵՐԵՎԱՆ – 2011

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Հայկական Կոնյակագործների Միություն իրավաբանական անձանց միությունը (այսուհետ՝ Միություն) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների արտադրության ու իրացման բոլոր փուլերում ներգրավված առևտրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու, ինչպես նաև նրանց ընդհանուր գույքային շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով ստեղծված հայկական ոչ առևտրային կազմակերպություն է, որի հիմնադիր մասնակիցներ են հանդիսանում միության հիմնադիր պայմանագրի կողմ հանդիսացող հայկական կոնյակագործները:

1.2 Միությունը իրավաբանական անձ է և նրա կազմակերպական-իրավական ձևն է՝ Իրավաբանական անձանց միություն:

2. Միության անվանումը

2.1 Միության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ Հայկական Կոնյակագործների Միություն իրավաբանական անձանց միություն
հայերեն կրճատ՝ ՀԿՄ իրավաբանական անձանց միություն

ռուսերեն լրիվ՝ Ассоциация Производителей Армянских Коньяков союз юридических лиц
ռուսերեն կրճատ՝ АПК союз юридических лиц

անգլերեն լրիվ՝ Association Of Armenian Brandy Producers association of legal entities
անգլերեն կրճատ՝ AABP association of legal entities

3. Գործունեության տարածքը և ժամկետը

3.1 Միությունը ստեղծված է Հայաստանի Հանրապետության և ցանկացած օտարերկրյա պետությունների տարածքում գործունեության իրականացման համար:
3.2 Միության գործունեության ժամկետը չի սահմանափակվում, այն ստեղծված է մշտապես գործելու համար՝ անորոշ ժմկետով:

4. Գտնվելու վայրը

4.1 Միության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0051. Կոմիտասի պողոտա 49/3:

5. Լեզուն

5.1 Միության պաշտոնական լեզուն հայերենն է:
5.2 Միության կողմից պաշտոնապես կարող են գործածվել նաև այլ լեզուներ՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

6. Կնիքը, ձևաթուղթը և խորհրդանիշը

6.1 Միությունն ունի կնիք և ձևաթուղթ:

6.2 Միությունը կարող է ունենալ խորհրդանիշ, որը հաստատվում է Ընդհանուր ժողովի կողմից: Միության կնիքը պարունակում է Միության լրիվ և/կամ կրճատ անվանումը հայերեն և ռուսերեն և/կամ անգլերեն լեզուներով:

6.3 Միության ձևաթուղթը նշում է պարունակում Միության անվանման, գտնվելու վայրի, կապի միջոցների համարների և հասցեների մասին:

6.4 Միության կնիքը, ձևաթուղթը Միության մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասության սահմաններում օգտագործվում են Միության ներքին փաստաթղթերի, ինչպես նաև Միությունից դուրս եկող երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի ձևակերպման և վավերացման համար:

6.5 Միության կնիքի և ձևաթղթի օգտագործումը չի կարող անվերապահորեն անհրաժեշտ համարվել Միության ներքին փաստաթղթերի և Միությունից դուրս եկող երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի իսկության և վավերականության հաստատման համար, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Բոլոր դեպքերում Միության ներքին փաստաթղթերի և Միությունից դուրս եկող երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի իսկության և վավերականության անհրաժեշտ հավաստումն է Միության իրավասու պաշտոնատար անձանց և (կամ) ներկայացուցիչների ստորագրությունը:

7. Միության Գույքը

7.1 Մասնակիցների՝ հիմնադրման պահին և դրանից հետո Միությանը հանձնված գույքը, ինչպես նաև Միության կողմից այլ աղբյուրներից ստացված գույքը վերջինիս սեփականությունն է:

7.2 Միության սեփականությունը կարող է օգտագործվել սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան, ներառյալ (սակայն, չսահմանափակվելով)՝ ծրագրերի իրականացման, աշխատողների և Միության պաշտոնատար անձանց վարձատրման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն Կանոնադրությանը չհակասող այլ գործունեության համար:

7.3 Միության սկզբնական սեփականությունը ձևավորվել է դրա հիմնադիր անդամների կողմից՝ Միության ստեղծման մասին պայմանագրին համապատասխան, Միությանը հանձնված գույքից:

7.4 Միության տարեկան ընդհանուր ժողովը հաստատում է Միության ընթացիկ տարվա բյուջեն և սահմանում է այդ բյուջեի իրականացման համար Միության մասնակիցների կողմից Միությանը հանձնման ենթակա գույքի չափը:

7.5 Միության մասնակիցները պարտավոր են Միությանը հանձնման ենթակա գույքը փոխանցել Միության սեփականությանը Միության յուրաքանչյուր տարեկան բյուջեն հաստատվելուց 1 (մեկ) ամսվա ընթացքում:

7.6 Միության մասնակիցների կողմից տարեկան բյուջեն ձևավորվում է անդամավճարներից և այլ ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցներից: Միության անդամավճարը մուծվում է Մասնակիցների կողմից հավասար և կազմում է տարեկան 1500000 դրամ:

7.7 Այլ ծրագրերի համար անհրաժեշտ ֆինանսավորումը ձևավորվում է Միության մասնակիցների կողմից համամասնական հիմունքով՝ նախորդ տարվա իրացման ծավալներին համապատասխան (արտահայտված դեկալիտրերով):

7.8 Միության սեփականությունը կարող է գոյանալ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ֆինանսական աղբյուրներից և այլ միջոցներից:

7.9 Միության մասնակիցները ամբողջ ծավալով և հավասարապես սուբսիդիար պատասխանատվություն են կրում Միության պարտավորությունների համար:

7.10. Միության մասնակցի կողմից սույն Կանոնադրությամբ և Միության ընդհանուր ժողովի որոշումներով նախատեսված վճարումները կատարելու պարտավորությունները խախտելու դեպքում այդպիսի մասնակիցը պարտավոր է յուրաքանչյուր խախտման համար Միությանը վճարել տուգանք՝ 100000 դրամի չափով: Ընդ որում՝ տուգանքի վճարումը չի ազատում մասնակցին Միության հանդեպ խախտված պարտավորությունները կատարելուց:

8.Միության նպատակները և գործունեության առարկան

8.1 Միության նպատակներն են.

8.1.1. «Հայկական Կոնյակ» տեղանվանման պահպանությունը,

8.1.2 հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների որակի ապահովման նպաստելը,

8.1.3. Հայկական կոնյակների և կոնյակի սպիրտների վաճառքի ծավալների մեծացման նպաստումը՝ բացառելով որևէ արտադրողի կամ ապարանքատեսակի գովազդումը:

8.2 Վերոնշված նպատակների իրականացման համար Միությունը ձեռնարկվում է ցանկացած և բոլոր իրավաչափ միջոցները, մասնավորապես (բայց չսահմանափակելով) իրականացնում է՝

8.2.1 հայկական կոնյակի սպիրտների արտադրության համար օգտագործվող խաղողի, հայկական կոնյակի սպիրտների, հայկական կոնյակների որակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ,

8.2.2 խաղողագործների, հայկական կոնյակի սպիրտների և հայկական կոնյակներ արտադրողների գործունեության կարգավորում, արտադրողներին խորհրդակցության տրամադրում, կոնյակագործության ոլորտում տեղեկատվության փոխանակում, ծանոթացում նոր տեխնոլոգիաների և սարքավորումների հետ,

8.2.3 Հայկական կոնյակի և կոնյակի սպիրտների վերաբերյալ օրենսդրակության ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում օրենսդրական նախաձեռնությունների և բարեփոխումների գործընթացում մասնակցություն,

8.2.4 Արտահանման նոր շուկաների բացահայտում, այդ շուկաներ մուտք գործելու հետ կապված խոչընդոտների բացահայտում, անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

8.2.5 Միջազգային մասնագիտացված ցուցահանդեսներին, ֆորումների, գիտաժողովների և կոնյակագործության ոլորտում իրականացվող միջոցառումների ասոցիացիայի մասնակիցների մասնակցության ապահովում:

8.3 Միության կառավարման մարմնի բոլոր որոշումները, ընդունած բոլոր կանոնակարգերը, հրահանգները և այլ ներքին փաստաթղթերը, որոնք հաստատվել են սույն Կանոնադրության 8.1. կետով սահմանված նպատակների իրականացման համար և/կամ սույն Կանոնադրության 8.2. կետում նշված գործառույթների շրջանակներում, պարտադիր են կատարման՝ Միության բոլոր մասնակիցների կողմից:

8.4 Միությունն իրավունք ունի նաև իր և/կամ իր բոլոր մասնակիցների անունից՝

8.4.1 որպես հայցվոր հանդես գալ բոլոր դատական ատյաններում՝ կապված Միության մասնակիցների ընդհանուր շահերի և իրավունքների պաշտպանության հետ, ինչպես նաև,

8.4.2 ներկայացնել և պաշտպանել իր և իր մասնակիցների ընդհանուր իրավունքներն ու շահերը այլ կազմակերպություններում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,

8.4.3 համագործակցել է Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,

8.4.4 անդամակցել միջազգային կազմակերպություններին, ունենալ միջազգային կապեր, օտարերկրյա կազմակերպությունների հետ հետ կնքել պայմանագրեր,

8.4.5 ստեղծել ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ,

8.4.6 իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

8.5 Միությունը ձեռնարկատիրական գործունեությամբ չի կարող զբաղվել, և Միության ծառայություններից Միության մասնակիցները օգտվում են անվճար:

9. Միության համագործակցությունը Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ

9.1 Միությունը ապահովում է հայկական կոնյակագործության զարգացման հարցում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, մասնավորապես՝ էկոնոմիկայի, Գյուղատնտեսության նախարարությունների մասնակցությունը Միության կառավարմանը՝ ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով:

9.2 Միությունը կարող է հայկական կոնյակագործության զարգացման բնագավառում համագործակցել նաև այլ պետական մարմինների հետ: Հայաստանի Հանրապետության պետական մարմինները Միության կառավարմանը մասնակցում են իրենց ներկայացուցիչների միջոցով:

10. Միության հիմնադիր մասնակիցները

10.1 Միության հիմնադիր մասնակիցներն են՝

#	Ֆիրմային Անվանումը	Պետական գրանցման համարը, ամսաթիվը, վկայականը	Հասցեն
1	"Երևանի Կոնյակի Գործարան" փակ բաժնետիրական ընկերություն	290.140.00020 26.05.1994թ. 01 Ա 000363	ՀՀ, ք. Երևան, Իսակովի 2
2	"Արտաշատ-Վինկոն" փակ բաժնետիրական ընկերություն	52.110.00164 12.02.1995թ. 01 Ա 006871	ՀՀ, Արարատի մարզ, գ. Մխչյան
3	"Ավշարի Գինու Գործարան" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	51.110.00248 25.12.1995թ. 01 Ա 021640	ՀՀ, Արարատի մարզ, գ. Ավշար
4	Երևանի "Արարատ" Կոնյակի-Գինու-Օղու Կոմբինատ բաց բաժնետիրական ընկերություն	286.120.02124 02.06.1996թ. 01 Ա 025353	ՀՀ, ք. Երևան, Իսակովի 9
5	Արարատի Կոնյակի Գործարան "Ա.Կ.Ձ." սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	51.020.00431 07.10.1997թ. 01 Ա 038128	ՀՀ, ք. Արարատ, Պուշկինի 12

6	"Գրեյթ Վելլի" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	286.110.03256 06.07.1999թ. 03 Ա 082705	ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 33, բն. 13
7	"Մ Ա Պ" փակ բաժնետիրական ընկերություն	83.120.00929 28.08.2001թ. 03 Ա 051578	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Լենուղի
8	"Արեգակ" Կոնյակի Գործարան սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	222.110.00025 28.12.2001թ. 03 Ա 053013	ՀՀ, Արարատի մարզ, գ. Դալար
9	"Ստեփանակերտի Կոնյակի Գործարան" փակ բաժնետիրական ընկերություն	443.120.11053 21.11.2005թ. 02 Ա 001574	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Մկրտչյանի 6
10	"Տավինկո" Գինու-Կոնյակի Գործարան սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	51.110.00835 25.08.2006թ. 03 Ա 072695	ՀՀ, Արարատի մարզ, գ. Տափերական
11	Գինու-Կոնյակի Տուն "Շահնազարյան" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	264.110.08744 08.09.2009թ. 03 Ա 085936	ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 2ա/28
12	"Վեդի-Ալկո" փակ բաժնետիրական ընկերություն	222.120.01258 31.03.2010թ. 03 Ա 089216	ՀՀ, Արարատի մարզ, գ. Գինեվետ

10.2 Միության մասնակից կարող են դառնալ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված և գործող այն առևտրային կազմակերպությունները, որոնք մշտական և հիմնական գործունեություն են իրականացնում կոնյակի արտադրության ոլորտում: Միության մասնակիցները պարտավոր են կատարել ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված պահանջները:

10.3. Միության մասնակիցները պահպանում են իրենց ինքուրույնությունը և իրավաբանական անձի իրավունքները:

10.4 Ընկերությունը, որը ցանկանում է անդամակցել Միությանը, պետք է բավարարի Միության ժողովի կողմից հաստատված անդամակցության համար նախատեսված չափորոշիչներին: Միությանը անդամակցել ցանկացող ընկերությունը գրավոր դիմում է ներկայացնում Գործադիր մարմնին՝ իրեն Միության մեջ ընդգրկելու մասին:

10.5 Միության ժողովի կողմից հաստատված անդամակցության համար նախատեսված չափորոշիչները մշակվում և Միության ժողովի հաստատմանն է ներկայացնում Միության Գործադիր մարմնի կողմից: Միության անդամակցության համար նախատեսված չափորոշիչները հանդիսանում են սույն կանոնադրության անբաժանելի մաս: Սույն կետում նշված չափորոշիչների հետ միասին Միության գործադիր մարմինը մշակում և ժողովի հաստատմանն է ներկայացնում նաև Միության հիմնադիր մասնակիցների համար այդպիսի չափորոշիչներին համապատասխանելու ժամանակացույց:

10.6 Միության մասնակից դառնալ ցանկացող անձին Միություն ընդունելու մասին որոշումը կայացնում է Ժողովը:

10.7 Միության յուրաքանչյուր հիմնադիր մասնակից սույն կանոնադրության 10.5 կետում նշված ժամանակացույցին համապատասխան չափորոշիչներին չհամապատասխանելու դեպքում կարող է Ժողովի որոշմամբ հեռացվել Միությունից՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

10.8 Միության մասնակիցը իրավունք ունի Կանոնադրությանը համապատասխան՝

10.8.1 մասնակցել ժողովի աշխատանքներին,

10.8.2 սպառիչ տեղեկատվություն ստանալ գործադիր մարմնի գործունեության մասին և օժանդակել վերջինիս գործունեությանը, այդ թվում՝

- ստանալ գործադիր տնօրենից Միության մասնակիցներին ներկայացվող եռամսյակային հաշվետվությունները,

- ծանոթանալ արձանագրային փաստաթղթերին, ստանալ ընդունված որոշումների պատճենները,

- հանդես գալ Միության գործունեությանը վերաբերող առաջարկություններով:

10.9. Ստանալ Միությունից իրավական օգնություն իր օրինական շահերի պաշտպանության համար, ինչպես նաև ֆինանսական և այլ օժանդակություն:

10.10Անվճար ստանալ Միության կողմից մատուցվող ծառայությունները,

10.11. Միության մարմնի որոշումները բողոքարկել Միության վերադաս մարմիններ:

10.12. Միության մասնակիցը պարտավոր է սույն Կանոնադրությանը համապատասխան՝

10.12.1. ակտիվորեն մասնակցել Միության աշխատանքներին,

10.12.2. հոգալ Միության հեղինակության բարձրացման համար,

10.12.3. ապահովել իրենց հայտնի դարձած՝ Միության և Միության մասնակիցների վերաբերյալ գաղտնի տեղեկատվության պահպանումը, ինչպես նաև չօգտագործել այդ տեղեկատվությունը՝ ի վնաս Միության և/կամ Միության որևէ մասնակցի,

10.12.4. հնարավորինս նպաստել Միության նպատակների իրականացմանը,

10.12.5. զերծ մնալ Միությունը վարկաբեկող արարքներից և արտահայտություններից,

10.12.6. բարեխղճորեն կատարել սույն Կանոնադրության պահանջները, ինչպես նաև Միության մարմինների և պաշտոնատար անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում ընդունած որոշումները,

10.12.7. Մասնակցել Միության գույքի ձևավորմանը և համալրմանը:

10.13. Միության ցանկացած մասնակից կարող է գրավոր բողոքարկել Միության մարմինների այն որոշումները, որոնք նրա կարծիքով հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և/կամ սույն Կանոնադրությանը և խախտում են նրա իրավունքները կամ օրինական շահերը:

10.14. Ընդհանուր ժողովի Նախագահի, գործադիր տնօրենի որոշումներն ու գործողությունները ինչպես նաև Վերստուգողի եզրակացությունները և գործողությունները կարող են մասնակցի կողմից բողոքարկվել Մասնակիցների ընդհանուր Ժողովում: Ընդհանուր Ժողովի կողմից բողոքը քննարկվում է առաջիկա գումարվող նիստում, և քննարկման արդյունքների մասին հայտնվում է բողոք բերած անձին:

11 Ընդհանուր ժողովը

11.1 Միության մասնակիցների ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողովը) Միության կառավարման բարձրագույն մարմինն է:

11.2 Ժողովը բաղկացած է Միության մասնակիցներից: Միության յուրաքանչյուր մասնակից Ժողովում ունի մեկ ձայնի իրավունք: Ժողովին՝ խորհրդակցական ձայնի իրավունքի, մասնակցելու իրավունք ունեն նաև Միության Նախագահը, եթե վերջինս միաժամանակ չի հանդիսանում նաև Միության մասնակցի ներկայացուցիչ, Գործադիր տնօրենը, Վերստուգողը, քարտուղարը, ինչպես նաև սույն կանոնադրության 9.1 կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների պատվիրակները:

11.3 Ժողովին մասնակցող Միության յուրաքանչյուր մասնակից ունի հավասար իրավունքներ: Միության յուրաքանչյուր մասնակից՝ Ժողովին մասնակցելու համար, կարող է նշանակել միայն մեկ ներկայացուցիչ: Մասնակիցների ներկայացուցիչների կողմից իրենց լիազորությունների փոխանցում այլ ներկայացուցիչների կամ անձանց չի թույլատրվում:

11.4 Ժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի ձևով: Ժողովի նիստերը լինում են տարեկան (այսուհետ՝ Տարեկան Ժողով), կանոնավոր (այսուհետ՝ Կանոնավոր Ժողով) և արտահերթ (այսուհետ՝ Արտահերթ Ժողով):

11.5 Տարեկան ժողովը գումարվում է տարին մեկ անգամ՝ հաշված դրա նախորդ գումարման օրվանից և համարվում է հերթական ժողով: Կանոնավոր Ժողովը գումարվում է նվազագույնը երկու ամիսը մեկ անգամ՝ իր իրավասության սահմաններում Միության շահերին և հետաքրքրություններին վերաբերվող հարցերի քննարկման համար: Տարեկան և Կանոնավոր Ժողովները գումարվում են Գործադիր տնօրենի կողմից:

11.6 Արտահերթ Ժողովները գումարվում են ըստ անհրաժեշտության՝ մասնակիցների մեկ երրորդի կամ Վերստուգողի՝ գործադիր տնօրենին ներկայացված պատճառաբանված պահանջով՝ ոչ ուշ քան 14 օրացուցային օրվա ընթացքում:

11.7 Միության մասնակիցները և Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող այլ անձինք առնվազն 14 օր առաջ (Տարեկան և Կանոնավոր Ժողովների դեպքում) կամ 5 օր առաջ (Արտահերթ Ժողովի դեպքում)՝ պատշաճ ձևով տեղեկացվում են Ժողովի առաջիկա նիստի օրակարգի, հրավիրման ժամանակի և վայրի մասին:

11.8. Ժողովի նիստն իրավազոր է, եթե դրան ներկա են Միության մասնակիցների առնվազն կեսից ավելին:

11.9 Ժողովի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են երեք տարի:

11.10 Ժողովը կարող է որոշումներ ընդունել Միության գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ: Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը, որոնք չեն կարող լուծվել Նախագահի և Գործադիր մարմնի կողմից, հետևյալն են՝

11.10.1 Կանոնադրությունում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը կամ Միության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

11.10.2. Միության տարեկան բյուջեի, գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը՝ ներառյալ Գործադիր տնօրենի և Վերստուգողի տարեկան հաշվետվությունների հաստատումը,

11.10.3 Միության գործունեության ռազմավարական ուղղությունների հաստատումը և ֆինանսական քաղաքականության ուղղությունների որոշումը,

11.10.4 Գործադիր մարմնի, Նախագահի, Քարտուղարի, Գանձապահի և Վերստուգողի ընտրությունը,

11.10.5 Գործադիր մարմնի, Նախագահի, Քարտուղարի, Գանձապահի և Վերստուգողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

11.10.6 Միություն նոր մասնակիցներ ընդունելը և Միության մասնակցին Միությունից հեռացնելը,

11.10.7 Անդամության վճարի և դրանց չափերի ու դրանց գանձումը կազմակերպելու հարցերի որոշումը,

11.10.8. Միության առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ ստեղծումը, լուծարումը, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ այդպիսի կազմակերպություններին մասնակից դառնալու մասին որոշումների ընդունումը,

11.10.9. Միության վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատողների հաստիքացուցակը, ինչպես նաև Միության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակարգի հաստատումը, վերստուգողի աշխատակարգի հաստատումը,

11.10.10 Միության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցմանակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից,

11.10.11 Միության լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից:

11.10.12. Միության անդամակցության համար նախատեսված չափորոշիչներ, ինչպես նաև միության հիմնադիր մասնակիցների կողմից այդպիսի չափորոշիչներին համապատասխանելու ժամանակացույցի հաստատումը:

Սույն կետի 11.10.2; 11.10.3 և 11.10.4 ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումները պարտադիր կարգով պետք է քննարկվեն և հաստատվեն միայն Տարեկան ժողովում: Գործադիր տնօրենի, Նախագահի, Քարտուղարի, Գանձապահի և Վերստուգողի ընտրության հարցերը կարող են քննարկվել նաև Կանոնավոր ժողովում կամ Արտահերթ ժողովում, եթե վերջիններս որոշում են ընդունել նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

11.11. Միության գործունեության կամ ժողովի ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ չկանոնակարգված իրադրություն առաջանալու դեպքում հարցերը լուծվում են ժողովի որոշմամբ:

11.12. Իր իրավասությանը վերապահված հարցերով ժողովն ընդունում է որոշումներ:

11.13. Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե կողմ է քվեարկել մասնակիցների ընդհանուր թվի կեսից ավելին, բացառությամբ Կանոնադրության 11.10.1, 11.10.9 և 11.10.10 կետերով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումների, որոնք ընդունվում են, եթե կողմ են քվեարկել մասնակիցների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:

11.14. Ցանկացած այլ հարցերի վերաբերյալ ժողովի որոշումներն ընդունվում են, եթե կողմ է քվեարկել ժողովի նիստին ներկա՝ ձայնի իրավունք ունեցող մասնակիցների և պատվիրակների կեսից ավելին:

11.15. Ժողովի նիստերի անցկացման հետ կապված ընթացակարգային հարցերը կարգավորվում են նիստում ընդունվող ժողովի կանոնակարգով սահմանված կանոններին համապատասխան:

12. Միության նախագահը

12.1. Միության Նախագահն ընտրվում է ժողովի կողմից՝ *ռոտացիոն սկզբունքով* մեկ տարի ժամկետով: Կանոնավոր կամ Արտահերթ ժողովների կողմից Նախագահն ընտրվում է մինչև առաջիկա գումարվող Տարեկան ժողովը ժամկետով:

12.2. Նախագահը՝

12.2.1. ներկայացնում է Միությունը պաշտոնական հավաքներում, պետական մարմինների և այլ պաշտոնական հարաբերություններում,

12.2.2. նախագահում է ժողովի նիստերը,

12.2.3. որպես ժողովի նախագահող, վավերացնում (ստորագրում) է ժողովի որոշումները, արձանագրությունները, այլ ակտերը և փաստաթղթերը,

12.2.4. հաստատում է Միության գործադիր տնօրենի աշխատանքային գործունեության ամենամսյա ծրագիրը և տալիս է նրան կատարման ենթակա ցուցումներ:

12.2.5. սույն կանոնադրության 13.6 կետով նախատեսված դեպքերում ժողովին է ներկայացնում Միության գործադիր տնօրենի թեկնածությունը

12.2.6. վերոնշված իրավասության սահմաններում իրականացնում է այլ գործառույթներ:

13. Միության գործադիր մարմինը

13.1. Սշակում և միության ժողովի հաստատմանն է ներկայացնում Միության անդամակցության համար նախատեսված չափորոշիչներ, ինչպես նաև միության հիմնադիր մասնակիցների կողմից այդպիսի չափորոշիչներին համապատասխանելու ժամանակացույցը:

13.2. Միության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Միության գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենը:

13.3. Գործադիր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին Միության գործունեությունը լուսաբանելու, Միության ընդհանուր ժողովի նիստերի հրավերները ուղարկելու, Միության աշխատակիցների գործունեությունը կազմակերպելու համար:

13.4. Ժողովի և Գործադիր մարմնի որոշումների կատարման նպատակով և դրանց շրջանակներում՝ Գործադիր ը տնօրինում է Միության բյուջեն, Միության անունից կնքում է պայմանագրեր և այլ գործարքներ, ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր:

13.5. Գործադիր մարմինը իրավասու է Միության աշխատողներին տալ կատարման համար պարտադիր ցուցումներ

13.6. Գործադիր մարմինը Ժողովի կողմից ընդունված որոշումները և ռազմավարական ծրագրերն իրականացնող մարմինն է, որը իրավասու է քննել և լուծել Միության գործունեությանը առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Ժողովի իրավասությանը վերապահված հարցերից:

13.7. Գործադիր մարմինը հաստատվում է Ժողովի կողմից՝ Նախագահի ներկայացմամբ: Այնուհանդերձ, Միության յուրաքանչյուր նորընտիր նախագահ իրավասու է Կանոնավոր կամ Արտահերթ Ժողովի առջև բարձրացնել Միության տնօրենի վերահաստատման հարցը:

13.8. Գործադիր տնօրենը, Ժողովի կողմից, նախագահի ներկայացմամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից:

13.9. Գործադիր մարմինը Նախագահի հաստատմանն է ներկայացնում իր աշխատանքային գործունեության ամենամսյա ծրագիրը:

13.10. Գործադիր մարմինը տարեկան Ժողովին ներկայացնում է տարեկան հաշվետվություններ՝ Միության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ: Բացի այդ, Գործադիր տնօրենը Միության մասնակիցներին ներկայացնում է եռամսյակային հաշվետվություններ՝ Միության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ:

13.11. Գործադիր տնօրենը՝

13.11.1. հաստատում է Միության ներքին աշխատանքային կարգապահության կանոնները, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Միության աշխատողներին,

13.11.2. մշակում և Ժողովի հաստատման է ներկայացնում Միության քաղաքականությունը և ծրագրերը՝ հիմնվելով Ժողովի կողմից ամրագրված ռազմավարական ուղղությունների վրա,

13.11.3. մշակում և Ժողովի հաստատմանն է ներկայացնում է Միության տարեկան բյուջեն, հետևում դրա կատարմանը,

13.11.4. ներկայացնում է առաջարկ Միության առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ ստեղծելու և լուծարելու մասին, ինչպես նաև առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ այդպիսի կազմակերպություններին մասնակից դառնալու մասին, հաստատում դրանց կանոնադրությունները, նշանակում՝ ղեկավարներին և գնահատում ծավալած աշխատանքները,

13.10.5. Ժողովի հաստատմանն է ներկայացնում Միության վարչակազմակերպական կառուցվածքը և աշխատողների հաստիքացուցակը, Միության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակարգը,

13.11.6. կազմակերպում է Ժողովի նիստերի հրավիրումը,

13.11.7. իր իրավասության սահմաններում իրականացնում է այլ գործառույթներ՝ բացառությամբ ժողովի իրավասությանը վերապահված հարցերից:

13.11.8. առանց լիազորագրի հանդես է գալիս Միության անունից և տալիս է լիազորագրեր Միության անունից հանդես գալու համար:

14. Միության քարտուղարը

14.1 Միության քարտուղարը (այսուհետ՝ Քարտուղար) ընտրվում է ժողովի կողմից: Տարեկան ժողովի կողմից Քարտուղարը ընտրվում է մեկ տարի ժամկետով: Կանոնավոր կամ Արտահերթ ժողովների կողմից Քարտուղարը ընտրվում է մինչև առաջիկա գումարվող Տարեկան ժողովը ժամկետով:

14.2. Քարտուղարը կազմակերպում է ժողովի նիստերի արձանագրությունների վարումը, դրանց, ինչպես նաև Միության պաշտոնական փաստաթղթերի կնքումը, Միության կնիքի պահպանությունը, Միության փաստաթղթերի պահպանումը և արխիվացումը, ինչպես նաև իրականացնում է Գործադիր տնօրենի կողմից տրված՝ իր գործառույթներին համապատասխանող հանձնարարությունները:

15. Միության գանձապահը

15.1. Միության գանձապահը (այսուհետ՝ Գանձապահ) ընտրվում է ժողովի կողմից: Տարեկան ժողովի կողմից Գանձապահը ընտրվում է մեկ տարի ժամկետով: Կանոնավոր կամ Արտահերթ ժողովների կողմից Գանձապահը ընտրվում է մինչև առաջիկա գումարվող Տարեկան ժողովը ժամկետով:

15.2. Գանձապահը հանդիսանում է Միության ֆինանսական հարցերով գլխավոր պատասխանատու, կազմակերպում է Միության ֆինանսական գործունեության ճշգրիտ իրականացումը, Միության հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը, ինչպես նաև իրականացնում է Գործադիր տնօրենի կողմից տրված՝ իր գործառույթներին համապատասխանող հանձնարարությունները:

16. Միության վերստուգողը

16.1. Միության վերստուգողը (այսուհետ՝ Վերստուգող) Միության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին է:

16.2. Վերստուգողը ընտրվում է ժողովի կողմից: Տարեկան ժողովի կողմից Վերստուգողը ընտրվում է մեկ տարի ժամկետով: Կանոնավոր կամ Արտահերթ ժողովների կողմից Վերստուգողը ընտրվում է մինչև առաջիկա գումարվող Տարեկան ժողովը ժամկետով:

16.3. Վերստուգող չի կարող լինել Գործադիր տնօրենը, Նախագահը, Քարտուղարը և Գանձապահը:

16.4. Վերստուգողն իր լիազորություններն իրականացնում է ՀՀ օրենսդրության, սույն Կանոնադրության և ժողովի կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան:

16.5 Վերստուգողը՝

16.5.1. վերահսկողություն է իրականացնում Միության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ (իրավասու է ցանկացած ժամանակ անցկացնել Միության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում),

16.5.2. տալիս է եզրակացություն՝ Միության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ, որոնք այդ հաշվետվությունների հետ մեկտեղ ներկայացվում են ժողովին,

16.5.3. վերահսկողություն է իրականացնում Միության մարմինների կողմից Կանոնադրության և ժողովի որոշումների կատարման նկատմամբ,

16.5.4. ծանոթանում է Միության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ է ներկայացնում Միության մարմիններ (առաջարկությունները Վերստուգի կողմից ներկայացվում են գրավոր՝

անհրաժեշտ պատճառաբանություններով և հիմնավորումներով. Ժողովին ուղղվող առաջարկությունները ներկայացվում են Ժողովի առաջիկա նիստից առնվազն 14 օր առաջ),

16.5.5. իրավասու է Միության պաշտոնատար անձանցից ու աշխատողներից պահանջել և ստանալ գրավոր կամ բանավոր տեղեկատվություն:

16.6. իրականացնում է Ժողովի որոշումներից բխող այլ լիազորություններ,

16.7. Իր իրավասությանը վերապահված հարցերիով Վերստուգողը ընդունում է որոշումներ և տալիս եզրակացություններ:

17 Միության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները

17.1 Միությունը, Ժողովի որոշմամբ կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ:

17.2 Առանձնացված ստորաբաժանումները գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սույն Կանոնադրությանը և իրենց կանոնադրություններին համապատասխան: Հիմնարկները գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սույն Կանոնադրությանը և իրենց կանոնադրություններին համապատասխան:

17.3 Առանձնացված ստորաբաժանման և հիմնարկի կանոնադրությունը հաստատվում է Գործադիր տնօրենի կողմից: Գործադիր տնօրենը նաև տալիս է առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ղեկավարների լիազորագրերը:

17.4 Միության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները կարող են լուծարվել Ժողովի որոշմամբ:

18 Միության վերակազմակերպումը և լուծարումը

18.1. Միությունը կարող է վերակազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ժողովի որոշմամբ:

18.2. Միությունը կարող է լուծարվել Ժողովի (ինքնալուծարում) կամ դատարանի որոշմամբ՝ << օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

18.3. Լուծարման մասին որոշումն ընդունելուց հետո Ժողովն ստեղծում է լուծարային հանձնաժողով:

18.4. Լուծարման դեպքում Միության գույքն ուղղվում է բացառապես Կանոնադրությունում ամրագրված նպատակներին, իսկ եթե դա անհնար է, ապա փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

775Н